



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Հովհաննիսյան Եղիսաբեթ

Շիրակ 1 Մանկապարտեզ՝ « Հուտ Առագաստ » ՀՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն-----
---3

Գլուխ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը
նախադպրոցական տարիքում

2.1 Տեսական մաս-----
4

2.2 Հետազոտության ընթացքը-----7

3. Եզրակացություն-----
-11

4. Գրականության ցանկ -----
12

5. Հավելված-----
---13

Ներածություն

Նախադպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, մանկապարտեզ, ընկերներ: Նախադպրոցական տարիքը երեխաների մոտ մաթեմատիկական պատկերացումները ձևավորվում է խաղերի միջոցով: 5-6 տարեկան երեխաների մոտ տարրական մաթեմատիկական պատկերացումները և գիտելիքները պետք է զարգացնել: Երեխան այդ տարիքում արդեն իսկ պետք է իմանա մեծության, չափի, ձևի մասին գիտելիքներ, ճանաչի գույները, ցուցաբերի հաշվի, թվերի, թվանշանների իմացություն: Հստակ խնդիրներ և նպատակներ ունեն, հատկապես մտավոր խաղերը. Ջարգացնել երեխաների հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, քանի որ առանց այդ հատկանիշների անհնար է երեխային ամբողջովին զարգացնել: Ոսումնասիրման համար ընտրել ենք <<Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում>> թեման: Հետազոտությունը իրականացնում ենք, որպեսզի ցույց տանք տարրական մաթեմատիկական գիտելիքների դերը նախադպրոցական տարիքում երեխաների սովորելու, ճանաչողական, մաթեմատիկական և տրամաբանելու կարողունակությունների զարգացման վրա: Հետազոտությունն իրականացրել ենք ավագ խմբում: Այն բաղկացած է գործնական պարապմունքից և դիտարկումից:

2. ՏԱՐԲԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

2.1 ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Ժամանակակից նախադպրոցական հաստատություններում տեղի ունեցող խոշոր փոփոխությունների նպատակը անձի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է՝ հաշվի առնելով նրա հետաքրքրությունները և ընդունակությունները: Նախադպրոցական հաստատություններում մաթեմատիկան երեխաների՝ ճանաչողական համընդհանուր գործողությունների զարգացման հիմքն է, դրանք են ընդհանուր ուսուցողական գործողությունները, տրամաբանական գործողությունները, խնդիրների առաջադրման և լուծման գործողությունները: Չափորոշիչում նշվում է, որ մաթեմատիկայի դասընթացի ուսումնասիրության Մաթեմատիկայի ուսուցումը երեխաների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետևողական գործընթաց է: Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման միջոցներն են՝ մաթեմատիկայի պարապմունքները, դիդակտիկ, զարգացնող, մրցակցային, ինտելեկտուալ խաղերը, զբոսանքները, էքսկուրսիաները, պարապմունքների զանազան տեսակների կապերը: Ձևավորվում են քանակական պատկերացումները, երկրաչափական պատկերների և մարմինների վերաբերյալ պատկերացումները, տարածության, ժամանակի ընկալման առանձնահատկությունները¹: Մաթեմատիկական բովանդակությամբ յուրաքանչյուր խաղ ունի իր խնդիրը՝ զարգացնել բանավոր համրանքը, ծանոթացնել թվերի բնական շարքին, թվերի կազմությանը, թվանշաններին, երկրաչափական պատկերներին, մարմիններին: Խաղերի ընթացքում երեխաները դիտում են, համեմատում,

¹ Ա. Արևուկյան, Բեդերյան «Տանը և դպրոցում». Երևան 2008
Էջ 45-46

վերլուծում: Այս կարողություններն ու հմտությունները չափազանց կարևոր են 3-6 տարեկան երեխաների համար, որպեսզի նրանք կարողանան հեշտությամբ կողմնորոշվել մաթեմատիկական այն իրավիճակներում, որոնց հետ առնչվում են առօրյա կյանքում: 3-6 տարեկան երեխաներն ունեն կոնկրետ մտածողություն, ուստի նրանք սկսում են ըմբռնել մաթեմատիկական հիմնական հասկացությունները, երբ ուղղակիորեն շփման մեջ են մտնում իրենց շրջապատող իրական առարկաների հետ: Նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական հասկացությունների զարգացման մեթոդաբանությունը երկար ճանապարհ է անցել XVII - XIX դարերում: Նախադպրոցական տարիքի երեխաների թվաբանության դասավանդման բովանդակության և մեթոդների և չափերի, ժամանակի և տարածության չափման միջոցառումների վերաբերյալ գաղափարների ձևավորումն արտացոլված են Կոմենսկու, Կ.Դ. Ուշինսկու, Ի.Գ. Պեստալոցու, Լ.Ն. Տոլստոյի և ուրիշների կողմից մշակված տեսություններում: Մաթեմատիկական զարգացման մեթոդի ժամանակակիցներն են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ռ.Լ. Բերեզինսան, Ռ.Լ. Ռիխտերմանը, Ա. Միխայլովան, Ա. Ս. Մեթլինը և ուրիշները²:

Նախադպրոցական տարիքի երեխաները ակտիվորեն օգտագործում են թվեր, տիրապետում են հաշվարկին, տարրական հաշվարկներ են կատարում տեսողական հիմունքներով և բանավոր, տիրապետում են ամենապարզ տարածական և ժամանակային հարաբերություններին, փոխում են տարբեր չափերի և ձևերի առարկաներ: Երեխան, առանց դա գիտակցելու, գործնականում զբաղվում է պարզ մաթեմատիկական գործունեությամբ՝ միաժամանակ յուրացնելով կապերն ու կախվածությունները, հատկությունները, հարաբերությունները, առարկաներից և թվային մակարդակից:

² Ա.Դալլաքյան, Ս.Ա Մարույան «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան 2008թ. 242 էջ

Պարապմունքների մեծ մասը ինտեգրված է, բարդ, որոնցում մաթեմատիկական խնդիրները զուգորդվում են երեխաների գործունեության այլ տեսակների հետ: Դասավանդման մեջ էական շեշտադրում է տրվում նախադպրոցական տարիքի երեխաների կողմից առաջադրանքների անկախ լուծմանը, միջոցների և տեխնիկայի ընտրությանը և դրա լուծման ճշտության ստուգմանը: Նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցումը ներառում է ինչպես ուղղակի, այնպես էլ միջակ մեթոդներ, որոնք օգնում են ոչ միայն մաթեմատիկական գիտելիքների յուրացմանը, այլև ընդհանուր մտավոր զարգացմանը: Պարապմունքների ընթացքում ձեռք բերված բոլոր գիտելիքներն ու հմտությունները համախմբված են դիդակտիկ խաղերում, որոնց պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը պարապմունքն է, բայց գործընթացը շարունակվում է նաև աշխատանքային կենտրոններում, ազատ ժամանցի, զբոսանքի, խաղերի, ինքնուրույն գործունեության ժամանակ: Ուսուցման կազմակերպման ձևերից առանձնացվում են նաև մաթեմատիկական բնույթի դիդակտիկ խաղերը, խաղ-մրցույթները, խաղ-առաջադրանքները:

2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտության ժամանակ աշխատել ենք ավագ խմբում, թվով 28 երեխա է մասնակցել պարապմունքին: ԽԻԿ մեթոդով իրականացրել ենք պարապմունքը և աշխատել ենք օրինաչափությունների պարապմունքի պլանով: Ուսումնասիրված թեման է << Օրինաչափություն >>:

Պարապմունքի անցկացման խնդիրները.

-սովորեցնել կազմել պարզ օրինաչափություններ, զարգացնել շրջակա աշխարհի առարկաների և երևույթների մեջ տրամաբանական կապը գտնելու կարողությունները,

-զարգացնել երկրաչափական տարբեր պատկերների միջոցով օրինաչափություններ կազմելու կարողությունը,

-սովորեցնել համեմատել ուղղանկյան կողմերի երկարությունը՝ չափելով չափանմուշի միջոցով,

-սովորեցնել ծալելու և կտրելու եղանակով առարկաները բաժանել երկու, չորս հավասար մասերի, հարաբերություն սահմանել ամբողջի և մասի միջև,

-զարգացնել սկսած գործը ավարտին հասցնելու կարողությունը,

-զարգացնել համագործակցելու ունակությունը:

Անհրաժեշտ պարագաները

Ցուցադրական- նկարներով հաշվենյութ, օրինաչափություններ, պատկերներ

Բաշխիչ-1-6 թվանշանները, քարտեր երկրաչափական տարբեր պատկերներով, հաշվենյութ նկարների պատկերներով, հաշվիչ փայտիկներ:

Ֆիզկուլտդադար

Խաղ-«Կատարիի հակառակը»

Տատիկը շատ լավիկն է.

Պահում է զույգ ուլիկներ

Մի մոխրագույն, մի դարչնագույն

Մի զույգ ուրախ ուլիկներ:

Տատիկն իր կամակոր ուլիկների հետ սիրում է խաղալ «Կատարիի հակառակը»

խաղը: Երեխաների հետ խաղում ենք այս խաղը: Տատիկն ուլիկներին ասում է

-Ոտիկները իջեցրե՛ք ցած, /ուլիկները բարձրացնում են/

-Ցու՛յց տվեք ձեր աջ ձեռքը, /ուլիկները.../:

-Թեքվե՛ք ք աջ կողմի վրա /ուլիկները.../:

-Ծա՛փ տվեք առջևում /ուլիկները.../:

-Քայլե՛ք դանդաղ դեպի հետ /ուլիկները.../

Պարապմունքի ժամանակ երեխաները բաժանվել են 3 խմբի: Խմբերից յուրաքանչյուրին տրվել է թղթից կտրտված երկրաչափական պատկերներ: Յուրաքանչյուր խումբ ասել է մեկական հանելուկ երկրաչափական պատկերների մասին /քառակուսի, եռանկյուն, շրջան/, մյուս խմբերը գտել են հանելուկի պատասխանը: Երեխաներին տրվել է առաջադրանք.

-Ձեր սեղաններին երկրաչափական տարբեր պատկերներ են դրված, իսկ այս սկուտեղի մեջ կան քարտեր, որոնք նախշազարդված են երկրաչափական պատկերներով: Պետք է աշխատեք զույգերով:

Զույգերը նստում են իրար դիմաց, որպեսզի նրանց կատարած նախշը չերևա:

-Ձեզանից մեկը կլինի խաղավար, մյուսը կստանա տարբեր երկրաչափական պատկերներ և կկատարի խաղավարի առաջադրանքը: Խաղավարը, վերցնելով զարդանախշված քարտերից մեկը, ընկերոջը պետք է թելադրի երկրաչափական պատկերներից կազմված նախշը: Օրինակ՝ դիր մեծ կարմիր շրջանը, փոքր կապույտ եռանկյունը...

Ավարտելով աշխատանքը խաղավարը ստուգում է մյուսի կատարածը: Երեխաները իրենց քարտերը փոխանակում են ուրիշ սեղանների շուրջ նստած երեխաների քարտերի հետ:

Ֆիզկուլտդպարից հետո խմբերից յուրաքանչյուրի սեղանին դրվել է հաշվիչ փայտիկներով մեկական տուփ: Երեխաներին հանձնարարվել է.

-Ի՞նչ գիտեք ուղղանկյան մասին /հանդիպակաղ երկու կողմերը կարճ են, մյուս երկուսից/:

-Ինչո՞վ է ուղղանկյունը տարբերվում քառակուսուց /քառակուսու բոլոր կողմերը հավասար են/:

-Ինչպե՞ս կարելի է այլ ձևով անվանել քառակուսին և ուղղանկյունը /քառանկյուն/:

-Ինչո՞վ են նման այդ երկու պատկերները /ունեն չորս անկյուն, չորս կողմ, չորս գագաթ/:

-Տուփից վերցրե՛ք փայտիկները և ստացե՛ք ուղղանկյան պատկերը:

Աշխատանքը ավարտելուց հետո հարցրել ենք.

- Ուղղանկյուն կառուցելու համար քանի՞ փայտիկ օգտագործեցիք

-Քանի՞ փայտիկ օգտագործեցիք քառակուսին կառուցելիս:

-Ինչու՞ են ուղղանկյան փայտիկները շատ:

Երեխաները բերել են օրինաչափությունների մի շարք օրինակներ: Մի խումբը ներկայացրել է տարվա եղանակները և ամիսները՝ բացատրելով, որ բնության մեջ

կան օրինաչափություններ և դրանք խախտել հնարավոր չէ: Մյուս խումբը ներկայացրել է ծիածանի գույները՝ բացատրելով, որ գույների հերթականությունը խախտել հնարավոր չէ, դա ևս բնության օրինաչափություն է: Մյուս խումբը ներկայացրել է բնական թվերի շարքը՝ բացատրելով, որ դա ևս օրինաչափություն է և հաջորդականությունը խախտել հնարավոր չէ: Պարապմունքից հետո դիտարկողները դիտարկելով պարապմունքը՝ գրավոր պատասխանել են պարապմունքի մասին հարցերին:

Ըստ դիտարկողների պարապմունքի ժամանակ դաստիարակը հասավ նպատակներին և երեխաների մոտ զարգացան մաթեմատիկական և ճանաչողական կարողունակությունները: Մյուս դիտարկողի կարծիքով երեխաները իրենց շատ լավ էին զգում, բարձր ոգևորվածությամբ մասնակցում էին պարապմունքի ամբողջ ընթացքին: Դիտարկողների կարծիքով թեման կարևորվում է տարրական դպրոցում այս ստացած գիտելիքների կիրառման և շրջական միջավայրի և երևույթների ճանաչողության իմաստի ընկալման առումով:

Եզրակացություն

Այսպիսով մաթեմատիկայի ուսուցումը երեխաների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետևողական գործընթաց է: Կարևոր է, որ երեխան սովորի համեմատել առարկաները, վերլուծել, ինքնուրույն դատողություն անել, գտնել պարզ օրինաչափություններ, կարողանա կապեր գտնել առարկաների հերթականության, նաև մարդկանց և բնության երևույթների, շինությունների և դրանց միջև եղած նմանությունների և տարբերությունների մասին: Եվ մեր կողմից իրականացված խաղային մեթոդների կիրառումը ավելի ամրապնդեց կրտսեր խմբում ստացած գիտելիքները:

Հետազոտական աշխատանքի ավարտին կարել է նք ասել, որ այն նպատակները, որոնք դրվել էին պարապմունքի անցկացման համար, մենք կարողացանք հասնել: Այդ մասին վկայեցին երեխաների օրինաչափությունների կազմման կարողությունները: Հարգելի գործընկերներ խորհուրդ կտամ ուշադրություն դարձնել պարապմունքների ժամանակ երեխաներին օրինաչափությունները բացատրելիս, առաջադրանքերը տալ այնպես, որ երեխաները պարապմունքի համար անհրաժեշտ երկրաչափական պատկերները իերնք կտրատեն և պատրաստեն թղթերից, քանի որ այս ամենը երեխաների մոտ կավելացնի հետաքրքրությունը և ավելի մեծ ոգևորվածությամբ կներգրավվեն դասին :

Գրականության ցանկ

1. Ա.Դավաթյան, Ս.Ա Մարույան «Նախադպրոցական մանկավարժություն»
Երևան 2008թ. 242 էջ
2. Ա.Արնուդյան, Բեդերյան «Տանը և դպրոցում». Երևան 2008 էջ 146

Հավելված





